ամենայն միաբանութեամբ ի յօրհնութիւն Էջմիածնին և ձեռնադրութեան կաթուղիկոսութեան ամենայն հայկազեան սեռի»։ Այդ նամակներին արձագանգ է տալիս Յովհաննէս Կոլոտիկ, և Աղուբ բէկի հաւանութիւնն ստանալուց յետոյ՝ հրաւիրում Թովմային գալ կաթուղիկոսական ընտրութեան մասնակցելու։ Այն երազներն ու տեսիլները, որ Աթոռի նորոգութեան նախօրեակներին տեսնում է Թովման, և մասամբ նորա շրջապատի անձինք, բնորոշում են նորա դերն ու սրբազան ոգևորութիւնը Աթոռի նորոգութեան գործում*։

Թովման ստանալով Յովհաննէս վարդապետի հրաւէրը, իւրայիններով՝ «վարդապետօք և եպիսկոպոսօք և քահանայիւք»՝ շտապում է Էջմիածին, նախապէս հանդիպելով Վիրապի և Հաւուց Թառի վանքերը։ Թովմային ընկերացել էին Մկրտիչ Մեծոփեցի Նահպետենց, Խառաբաստայ Կարապետ և Յովսէփ վարդապետները, Ղազար Բաղիշեցի, Ստեփանոս և Յովհաննէս վարդապետներ Արծկէից, իւր աշակերտ Մեծոփայ կամ Արճիշու Յովհաննէս եպիսկոպոս, Վարագի Զաքարէ վարդապետ, չթուած աւելի երկրորդականները։ Այստեղ յիշուած վարդապետների մեծ մասը Թովմայի ընկերներն էին կամ աշակերտները։ Թղթով միաբանուածներից էլ շատերը նորա ծանօթներն էին կամ բարեկամները, ինչպէս Բաղիշու Ստեփանոս եպիսկոպոսը, Ս. Կարապետի, Առաքելոց, Վարագայ և Սաղնապատու եպիսկոպոսներն ու վարդապետները։ Ընտրութեան ժամանակ մեծամասնութիւնը Թովմայի կողմն էր և նորընտիր կաթուղիկոսն էլ Խառաբաստայ աշակերտներից և հաւանօրէն ենթարկուած Թովմայի ազդեցութեան։ Այդ էր պատճառ, որ Յովհաննէս Կոլոտիկ Վիրապեցու դէմ Աղուբ բէկին գանգատելիս յայտնում է, թէ «ես ոչ եմ ձեռնադրեալ զնա, այլ Թովմէն և ընկերք նորին»**։ Այդ խօսքերը ճշմարիտ են միայն այն մտքով, որ Թովմայի կուսակիցները զօրեղ էին ընտրութեան ժամանակ։ Ժամանակակից մի ուրիշ յիշատակարան ՊՂԱ (=1442) թուականից յայտնում է, թէ «ի յայսմ ամի եղև ժողով եպիսկոպոսաց և վարդապետաց ի մայրաքաղաքն ի Վաղարշապատ, որոց գլուխ մեծ rաբունապետն Թովմայ և Յովհաննէս վարդապետն»***։ Թովման իբրև պատասխան Յովհաննէս վարդապետի խօսքին իւր համեստ մասնակցութիւնն է պատմում բուն ձեռնադրութեան ժա-

---

* Կոստանեանց. Թովմա Մեծ. Յիշատ. 63—65.

** Կոստանեանց. Թովմա Մեծոփ. Յիշատակարանը 80.

*** Պատմ. Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ. Վաղարշապատ. 1896. եր. 418.